«ԹԻՎ 2 ԲՈՒԺՄԻԱՎՈՐՈՒՄ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2025Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարության հայտարարություն 2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների պատրաստման եվ հաստատման պատասխանատվության վերաբերյալ *3*
Անկախ աուդիտորի եզրակացություն *4*
Շահույթի կամ վնասի և այլ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն *7*
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն *8*
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն *9*
Դրամական հոսքերի մասին հաշվետվություն *10*
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ *11*

ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 2025Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարությունը պատասխանատու է «Թիվ 2 բուժմիավորում» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակը, նույն ամսաթվին ավարտված տարվա գործունեության արդյունքները, դրամական միջոցների հոսքերը և զուտ ակտիվներում փոփոխությունների մասին ճշմարիտ ներկայացնող, Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (ՖՀՄՍ-ներ) համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է՝

- Հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճ ընտրության և կիրառման համար,
- Հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ ներկայացվող տեղեկատվության համապատասխանության, վստահելիության, համեմատականության և հասկանալիության համար,
- Լրացուցիչ բացահայտումների տրամադրման համար, երբ ՖՀՄՍ-ի հատուկ պահանջների համապատասխանությունը բավարար չէ, որպեսզի օգտագործողները պատկերացում կազմեն Ընկերության ֆինանսական վիճակի մասին,
- Ընկերության գործունեության անընդհատությունն ապահովելու կարողության գնահատման համար:

Ղեկավարությունը նաև պատասխանատու է՝

- Ընկերությունում ներքին վերահսկողության արդյունավետ և ողջամիտ համակարգ մշակելու, ներդնելու և պահպանելու համար,
- Համապատասխան հաշվապահական գրանցումներ վարելու համար, որոնք բավարար կլինեն Ընկերության գործառնությունները արտացոլելու և ներկայացնելու և ցանկացած ժամանակ Ընկերության ֆինանսական վիճակը ողջամիտ ճշգրտությամբ բացահայտելու համար, ինչպես նաև հնարավորություն կընձեռեն ղեկավարությանը հավաստիանալու, որ Ընկերության ֆինանսական հաշվետվությունները համապատասխանում են ՖՀՄՍ-ներին,
- ՀՀ օրենսդրության և հաշվապահական ստանդարտների պահանջներին համապատասխան հաշվապահական հաշվառում վարելու համար,
- Ընկերության ակտիվների անվտանգության ապահովման համար խելամիտ քայլերի իրականացման համար,
- Խարդախությունների և նմանատիպ այլ երևույթների բացահայտման և կանխարգելման համար:

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները հաստատված են հրապարակման համար 2026թ. սեպտեմբերի 15-ին:

Տնօրեն
Ա. Նազարյան

Գլխավոր հաշվապահ
Լ. Շահոյան

2026թ. սեպտեմբերի 15
Երևան, Հայաստանի Հանրապետություն

«Էյչ Էմ աուդիտ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Ազատության նրբանցք 7/5,
Հեռախոս +37498098041
ՏԳՀ. ՀՀ, ք. Երևան,
Քաջազնունի 1 Ա

"HM audit" LLC
Azatutyan 7/5 ,Yerevan , RA
tel: +37498098041
AEA: Qajaznuni 1A
Yerevan, RA

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է «Թիվ 2 բուժմիավորում» փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերին

Վերապահումով կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Թիվ 2 փակ բեւժմիավորում» ՓԲԸ (այսուհետ՝ Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2025թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, բացառությամբ մեր եզրակացության «Վերապահումով կարծիքի հիմք» բաժնում նկարագրված հարցի ազդեցության, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն (այսուհետ՝ ՖՀՄՍ):

Վերապահումով կարծիքի հիմք

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության պաշարները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլված է 42 853 հազար դրամ (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 37 703 հազար դրամ), որը մեծամասամբ բաղկացած է բազմատեսակ դեղորայքից : Մենք չենք մասնակցել հաշվետու ամսաթվով պաշարների գույքագրման գործընթացին: Ուստի, հաշվի առնելով պաշարների բնույթը, մենք անկարող էինք ձեռք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ պաշարների առկայության վերաբերյալ: Հետևաբար, մենք անկարող էինք որոշել արդյոք անհրաժեշտ է կատարել պաշարների նշված մնացորդների, ինչպես նաև տվյալ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում որպես վաճառքի ինքնարժեք արտացոլված գումարի ճշգրտում:

Աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրքի (ՀՄԴ-Վարքագիրք) և ՀՀ-ում կիրառելի

ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող վարքագծի պահանջների, և պահպանել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պահանջները՝ այդ կանոնների համաձայն: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Այլ հանգամանք

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվության աուդիտն իրականացվել է այլ աուդիտորական կազմակերպության կողմից:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ընկերությունը լուծարելու կամ Ընկերության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն մենք՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, գեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում,
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Խմբի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար,
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը,
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների վերաբերյալ էական անորոշություն, որը կարող են նշանակալի կասկած հարուցել Ընկերության

անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը՝ դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը,

- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցվում ենք կառավարման օղակներում գտնվող անձանց հետ աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Կառավարման օղակներում գտնվող անձանց նաև տրամադրում ենք հավաստիացում, որ պահպանել ենք անկախության վերաբերյալ էթիկայի պահանջները, ինչպես նաև նրանց տեղեկացնում ենք բոլոր հարաբերությունների կամ այլ հարցերի մասին, որոնք ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա, և որտեղ կիրառելի է, անկախության պահպանմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ:

15 սեպտեմբերի 2026թ.

Տնօրեն- աուդիտի գործընկեր *Ա. Մխիթարյան*

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

«Թիվ 2 բուժմիավորում» ՓԲԸ
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Հազար ՀՀ դրամ

	Ծան.	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ԱԿՏԻՎ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	5	1 890 819	1 985 585
Ոչ նյութական ակտիվներ		1 102	823
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		**1 891 921**	**1 986 408**
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	6	42 853	37 703
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	7	74 557	161 035
Տրամադրած փոխառություններ	8	686 871	854,542
Դրամական միջոցներ	9	11 220	20 390
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		**815 501**	**1 073 670**
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		**2 707 422**	**3 060 078**
ԿԱՊԻՏԱԼ և ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Սեփական կապիտալ			
Համալրված բաժնետիրական կապիտալ	10	36 188	36 188
Հիմնական միջոցների վերագնահատումից արժեքի աճ		1 089 103	1 149 580
Չբաշխված շահույթ (չծածկված վնաս)		(416 385)	(306 889)
Ընդամենը սեփական կապիտալ		**708 906**	**878 879**
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	11	1 210 854	1 400 781
Հետաձգված հարկային պարտավորություններ	12	234 172	224 883
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		**1 445 026**	**1 625 664**
Ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ		300 000	230 000
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	11	209 496	283 622
Պահուստներ	13	25 898	23 950
Շնորհներ		18 096	17 963
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**553 490**	**555 535**
ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		**2 702 422**	**3 060 078**

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են Ընկերության ղեկավարության կողմից 2026թ. սեպտեմբերի 15-ին:

Տնօրեն

Ա. Նազարյան

Գլխավոր հաշվապահ

Լ. Շահոյան

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից ծանոթագրությունների հետ միասին: (էջ 11-33)

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

«Թիվ 2 բուժմիավորում» ՓԲԸ

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Հազար ՀՀ դրամ

Հազար դրամ	Ծան.	2025թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հասույթ	14	1 302 490	1 237 404
Վաճառքի ինքնարժեք	15	(1 237 676)	(1 095 917)
Համախառն շահույթ (վնաս)		**64 814**	**141 487**
Վարչական ծախսեր	16	(191 285)	(160 645)
Այլ եկամուտ	17	85 964	71 270
Այլ ծախսեր	18	(3 789)	(1 796)
Այլ օգուտ (կորուստ)	19	24 157	-
Զուտ շահույթ (վնաս) նախքան հարկումը		**(150 331)**	**(85 478)**
Շահութահարկի գծով ծախս	20	(19 642)	9 279
Շարունակվող գործունեությունից գուտ շահույթ (վնաս)		**(169 973)**	**(76 199)**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		(169 973)	(76 199)

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից ծանոթագրությունների հետ միասին: (էջ 11-33)

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

«Թիվ 2 բուժմիավորում» ՓԲԸ
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Հազար ՀՀ դրամ

	Կանոնադրական կապիտալ	Վերագնահատումից պահուստ	Չբաշխված շահույթ (չծածկված վնաս)	Ընդամենը
2024թ հունվարի 1-ի դրությամբ	**36 188**	**1 171 768**	**(252 878)**	**955 078**
Շարունակվող գործունեությունից զուտ շահույթ (վնաս)	-		(76 199)	(76 199)
Ներքին շարժեր		(22 188)	22 188	-
2024թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	**36 188**	**1 149 580**	**(306 889)**	**878 879**
2025թ հունվարի 1-ի դրությամբ	**36 188**	**1 149 580**	**(306 889)**	**878 879**
Շարունակվող գործունեությունից զուտ շահույթ (վնաս)	-		(169 973)	(169 973)
Ներքին շարժեր		(60 477)	60 477	-
2025թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	**36 188**	**1 089 103**	**(416 385)**	**708 906**

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մաս կազմող կից ծանոթագրությունների հետ միասին: (էջ 11-33)

Դրամական հոսքերի մասին հաշվետվություն

«Թիվ 2 բուժմիավորում» ՓԲԸ
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Հազար ՀՀ դր

	2025թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հաճախորդներից ստացված դրամական միջոցներ	1 262 304	1 188 744
Այլ մուտքեր	12 955	21 757
Աշխատակիցներին վճարված դրամական միջոցներ	(726 798)	(675 687)
Նյութերի,ապրանքների ձեռք բերման գծով ելքեր	(143 512)	(115 814)
Աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գծով ելքեր	(130 832)	(120 809)
Վճարված հարկեր և պարտադիր վճարներ, այդ թվում նաև որպես հարկային գործակալ	(225 128)	(231 732)
Այլ վճարումներ	(3 339)	(8 800)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**45 690**	**57 659**
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ոչ ընթացիկ ակտիվների ձեռք բերում	(6 111)	(31 539)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**(6 111)**	**(31 539)**
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ստացված վարկերից և փոխառություններից դրամական միջոցների մուտքեր	161 940	195 678
Ստացված վարկերի և փոխառությունների մարումից դրամական միջոցների ելքեր	(210 416)	(218 625)
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	(48 476)	(22 947)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ (նվազում)/աճ	**(8 897)**	**3 173**
Դրամական միջոցների տարեսկզբի մնացորդը	**20 390**	**17 928**
Արտարժույթի փոխարժեքի փոփոխման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(283)	(711)
Դրամական միջոցների տարեվերջի մնացորդը	**11 120**	**20 390**

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից ծանոթագրությունների հետ միասին (էջ 11-33):

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

«Թիվ 2 բուժմիավորում» ՓԲԸ
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար
Հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ

1. Ընդհանուր տեղեկություն

«Թիվ 2 բուժմիավորում» ՓԲԸ-ն (այսուհետ՝ «Ընկերություն») փակ բաժնետիրական ընկերություն է, որը հիմնադրվել է Հայաստանի Հանրապետությունում 2003թ. օգոստոսի 14-ին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:
Ընկերության գրանցման հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Արամի փողոց, 54:
Ընկերության գործունեության հիմնական ուղղությունը հանդիսանում է բնակչությանը բժշկական ծառայությունների մատուցումը:
Կապակցված կողմերի հետ գործարքները ներկայացված են ծան. 23-ում:

2. Համապատասխանության մասին հայտարարություն

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն:
Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են այն ենթադրության հիման վրա, որ Ընկերությունը գործում է անընդհատության հիմունքով և կշարունակի գործունեությունը մոտ ապագայում:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ հազար դրամով (այսուհետ՝ դրամ), եթե այլ բան նշված չէ:

3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունը

Պատրաստման հիմունքներ

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են սկզբնական արժեքի հիման վրա: Սկզբնական արժեքը սովորաբար հիմնված է ապրանքների և ծառայությունների դիմաց տրված հատուցման իրական արժեքի վրա:

Իրական արժեքն այն գումարն է, որը շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքի արդյունքում կստացվեր ակտիվը վաճառելիս, կամ կվճարվեր պարտավորությունը փոխանցելիս՝ անկախ նրանից, թե արդյոք գինը ուղղակիորեն դիտարկելի է կամ գնահատվել է՝ օգտագործելով այլ գնահատման մեթոդներ: Ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը գնահատելիս Ընկերությունը հաշվի է առնում ակտիվի կամ պարտավորության բնութագրերը, եթե շուկայի մասնակիցներն այդ բնութագրերը հաշվի կառնեին չափման ամսաթվի դրությամբ ակտիվի կամ պարտավորության գինը որոշելիս:

Այս ֆինանսական հաշվետվություններում չափման և/կամ այլ բացահայտումների նպատակով իրական արժեքը որոշվում է նման սկզբունքներով, բացառությամբ բաժնետոմսերի վրա հիմնված վճարման գործարքների, որոնք որոշվում են ՖՀՄՍ 2-ի շրջանակներում, լիզինգային գործարքների, որը որոշվում է ՖՀՄՍ 16 շրջանակներում, և իրական արժեքին որոշակի նմանություն ունեցող գնահատականները, որոնք իրական արժեք չեն հանդիսանում, ինչպիսիք են՝ իրացման զուտ արժեքը՝ ՀՀՄՍ 2-ի շրջանակներում, կամ օգտագործման արժեքը՝ ՀՀՄՍ 36-ի շրջանակներում:

Ի լրումն, ֆինանսական հաշվետվությունների նպատակով իրական արժեքի չափումները դասակարգվում են մակարդակ 1, 2 և 3-ի՝ ելնելով իրական արժեքի չափումներում օգտագործված սկզբնական տվյալների դիտարկելիության աստիճանից, ինչպես նաև այդ սկզբնական տվյալների՝ իրական արժեքով չափման ամբողջական պատկերի վրա ազդեցության էականության աստիճանից: Այդ մակարդակները կարելի է նկարագրել հետևյալ կերպ՝

- Մակարդակ 1-ի դեպքում մուտքային տվյալներ են հանդիսանում ակտիվ շուկայում համանման ակտիվների կամ պարտավորությունների նշված գները (չճշգրտված), որոնք Ընկերությանը հասանելի են չափման ամսաթվի դրությամբ:

- Մակարդակ 1-ի դեպքում մուտքային տվյալներ են հանդիսանում ակտիվ շուկայում համանման ակտիվների կամ պարտավորությունների նշված գները (չճշգրտված), որոնք Ընկերությանը հասանելի են չափման ամսաթվի դրությամբ:
- Մակարդակ 2-ի մուտքային տվյալներն իրենցից ներկայացնում են մակարդակ 1-ում նշված գներից տարբերվող մուտքային տվյալները, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն դիտարկելի են ակտիվների կամ պարտավորությունների գծով:
- Մակարդակ 3-ի մուտքային տվյալները իրենցից ներկայացնում են ակտիվների կամ պարտավորությունների գծով ոչ դիտարկելի մուտքային տվյալները:

Հայաստանի Հանրապետությունում գրանցված Ընկերությունը իր հաշվապահական հաշվառումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների համաձայն:

Հիմնական միջոցներ

Սկզբնական ճանաչման պահին հիմնական միջոցները չափվում են սկզբնական արժեքով: Ձեռքբերված հիմնական միջոցների միավորի սկզբնական արժեքն ընդգրկում է նրա գնման գինը, ներկրման տուրքերը, չփոխհատուցվող հարկերը և պարտադիր այլ վճարները, տրանսպորտային ծախսումները, ինչպես նաև ակտիվն իր նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ անմիջականորեն կապված ծախսումները:

Կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցները, որոնք պահվում են վարձակալության կամ վարչական կամ դեռևս անորոշ նպատակով, հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է մասնագիտական վճարները, իսկ որակավորվող ակտիվի դեպքում նաև կապիտալացման ենթակա փոխառության ծախսումները՝ համաձայն ընկերության որդեգրած քաղաքականության: Այս ակտիվների մաշվածությունը ևս հաշվարկվում է, երբ դրանք դառնում են պատրաստ իրենց նպատակային նշանակությամբ օգտագործելու համար:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրս գրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի ու ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Հիմնական միջոցի առանձին հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները, որոնք հաշվառվում են որպես առանձին ակտիվ, կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ միասին: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում կամ ներառվում է այլ ակտիվի ինքնարժեքում՝ կիրառելով գծային մեթոդը՝ հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում:

Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը հանձնվել է շահագործման՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Շենքեր,շինություններ	20-30 տարի
Մեքենաներ, սարքավորումներ	*5-10 տարի*
Տրանսպորտային միջոցներ	*8 տարի*
Արտադրական և տնտեսական գույք	*5-10 տարի*
Համակարգչային տեխնիկա	*1-5 տարի*
Այլ	*5-10 տարի*

Ակտիվի մնացորդային արժեքը և օգտակար ծառայությունը վերանայվում են առնվազն յուրաքանչյուր ֆինանսական տարեվերջի դրությամբ, եթե ակնկալիքները տարբերվում են նախորդ գնահատումներից:

Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Ընկերության կողմից և ունեն օգտակար ծառայության ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, որը կազմում է՝

Համակարգչային ծրագրեր	*5-10 տարի*
Բանաձևեր, մոդուլներ, նախագծեր	*տարի*

Գործառնական և ներկայացման արժույթ

Ֆինանսական հաշվետվություններում ներառված միավորները չափվում են այն տնտեսական միջավայրում գործող արժույթով, որում Ընկերությունն իրականացնում է իր գործունեությունը («գործառնական արժույթ»): ՀՀ դրամը Հայաստանի Հանրապետությունում գործող արժույթն է և Ընկերության գործառնական արժույթը:

Այս ֆինանսական հաշվետվությունների նպատակների համար ղեկավարությունը որոշել է ո
րպես ներկայացման արժույթ օգտագործել ՀՀ դրամը (դրամ):

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներառված ակտիվները և պարտավորությունները դրամի փոխանակելու համար կիրառվում է հաշվետու ամսաթվի դրությամբ գործող փոխանակման փոխարժեքը: Եկամուտների, ծախսերի բոլոր հոդվածները փոխանակվում են գործարքների ամսաթվերի դրությամբ գործող փոխանակման միջին փոխարժեքներով :

Սեփական կապիտալի բաղադրիչները փոխարկվում են սկզբնական փոխարժեքով:

Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվելով զուտ գումարով, եթե գոյություն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք և հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն: Եկամուտները և ծախսերը չեն հաշվանցվում շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, եթե դա չի պահանջվում կամ թույլատրվում որևէ հաշվապահական հաշվառման ստանդարտով կամ մեկնաբանությամբ, և հստակ բացահայտված չէ Ընկերության հաշվապահական քաղաքականության մեջ:

Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնադրույթները ներկայացված են ստորև: Սույն հաշվետվությունում ներկայացված հաշվապահական քաղաքականությունը հետևողականորեն կիրառվել է սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

Արտարժույթով գործարքներ

Ընկերության գործառնական արժույթից տարբեր այլ արժույթներով (արտարժույթով) կատարված գործարքները ճանաչվում են համապատասխան գործառնական արժույթի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի վերջի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները վերափոխարկվում են գործառնական արժույթի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով:

Դրամային միավորների գծով արտարժույթով իրականացված գործառնություններից առաջացած օգուտը կամ վնասն իրենից ներկայացնում է ժամանակաշրջանի սկզբում գործառնական արժույթով արտահայտված, արդյունավետ տոկոսադրույքի ու ժամանակաշրջանի վճարումների ճշգրտումով ամորտիզացված արժեքի և հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործող փոխարժեքով փոխարկված, գործառնական արժույթով արտահայտված ամորտիզացված արժեքի միջև տարբերությունը:

Սկզբնական արժեքով չափվող, արտարժույթով արտահայտված ոչ դրամային միավորները փոխարկվում են գործառնական արժույթի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Վերափոխարկման հետևանքով առաջացած արտարժութային տարբերությունները ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքում՝ դրանց առաջացման ամսում:

Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից առաջացած օգուտներն ու վնասները ներառվում են զուտ հիմունքով՝ որպես ֆինանսական եկամուտ կամ ֆինանսական ծախս՝ կախված այն հանգամանքից՝ արդյոք արտարժույթի շարժերը զուտ օգուտի կամ զուտ վնասի դիրքում են:

Հարկում

Շահութահարկի գծով ծախսը ներառում է ընթացիկ հարկի գծով պարտավորությունը և հետաձգված հարկը:

Ընթացիկ հարկ

Ընթացիկ հարկի գծով պարտավորությունը հիմնված է տարվա հարկվող շահույթի վրա: Հարկվող շահույթը տարբերվում է համապարփակ եկամուտների մասին հաշվետվություններում ներկայացվող «շահույթ մինչև հարկում»-ից եկամտի և ծախսի այնպիսի տարրերի պատճառով, որոնք հարկման կամ նվազեցման ենթակա են այլ հաշվետու ժամանակաշրջաններում, ինչպես նաև այն տարրերի, որոնք երբևէ չեն հարկվելու կամ նվազեցվելու: Ընկերության ընթացիկ հարկային պարտավորությունները հաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ուժի մեջ մտած կամ, ըստ էության, ուժի մեջ մտած հարկի դրույքաչափերը:

Հետաձգված հարկ

Հետաձգված հարկերը ճանաչվում են ժամանակավոր տարբերությունների գծով, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների և հարկման բազաների միջև, որոնք օգտագործվում են հարկվող շահույթի հաշվարկում: Հետաձգված հարկային պարտավորությունները ընդհանուր առմամբ ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկային ակտիվները, ընդհանուր առմամբ, ճանաչվում են բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով միայն այն չափով, որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունները:

Նմանատիպ հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չեն ճանաչվում այն ժամանակավոր տարբերությունների համար, որոնք առաջանում են ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչման պահին այնպիսի գործարքների արդյունքում, որոնք ազդեցություն չունեն ինչպես հաշվապահական, այնպես էլ հարկվող շահույթի վրա: Ի լրումն դրա, հետաձգված հարկային պարտավորությունները չեն ճանաչվում, եթե ժամանակավոր տարբերությունն առաջացել է գուդվիլի սկզբնական ճանաչումից:

Հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքը պետք է վերանայվի յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվի այն չափով, որով այլևս հավանական չէ, որ կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները պետք է չափվեն հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային օրենքները), որոնք ուժի մեջ են եղել, կամ, ըստ էության, ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումը պետք է արտացոլի հարկային հետևանքները, որոնք կառաջանան՝ կախված այն եղանակից, որով Ընկերությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջում ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

Տարվա ընթացիկ և հետաձգված հարկեր

Ընթացիկ և հետաձգված հարկերը ճանաչվում են ֆինանսական արդյունքում, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք վերաբերում են տարրերի, որոնք ճանաչվել են այլ համապարփակ եկամուտներում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում, ինչի դեպքում ընթացիկ և հետաձգված հարկերը նույնպես ճանաչվում են այլ համապարփակ եկամուտներում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում: Եթե ընթացիկ կամ հետաձգված հարկերն առաջանում են բիզնեսների միավորման սկզբնական հաշվապահական հաշվառման արդյունքում, ապա հարկային հետևանքները ներառվում են բիզնեսների միավորման հաշվապահական հաշվառման մեջ:

Հասույթի ճանաչում

Ընկերությունը ճանաչում է հասույթը՝ արտացոլելով ապրանքների և ծառայությունների փոխանցումը հաճախորդներին այն գումարով, որը Ընկերությունն ակնկալում է ստանալ տվյալ ապրանքների և ծառայությունների դիմաց:

Ապրանքների վաճառք

Ապրանքների վաճառքից հասույթը ճանաչվում է 5 քայլից բաղկացած մոտեցմամբ, ինչպես ներկայացված է ՖՀՄՍ 15 ստանդարտում.

- Ընկերությունը նույնականացնում է հաճախորդի հետ պայմանագիրը
- Ընկերությունը սահմանում է պայմանագրում կատարման պարտավորությունները,
- Գործարքի գինը որոշում է Ընկերությունը,
- Գործարքի գինը բաշխվում է պայմանագրերում կատարման պարտավորություններին,
- Հասույթը ճանաչվում է միայն այն դեպքում, երբ Ընկերությունը կատարում է պայմանագրով ստանձնած պարտավորությունը:

Ընկերությունը ճանաչում է հասույթը, երբ կամ որպես կատարման պարտավորությունը կատարվում է, այսինքն՝ երբ ապրանքները վաճառվում են մանրածախ խանութներում մանրածախ հասույթների համար կամ մատակարարվում հաճախորդներին մեծածախ վաճառքի համար:

Հասույթը նվազեցվում է հաճախորդների գնահատված վերադարձի, զեղչերի և այլ համանման պահուստների գծով:

Ծառայությունների մատուցում

Ծառայությունների մատուցումից հասույթը ճանաչվում է 5 քայլից բաղկացած մոտեցմամբ, ինչպես ներկայացված է ՖՀՄՍ 15 ստանդարտում.

- Ընկերությունը նույնականացնում է հաճախորդի հետ պայմանագիրը,
- Ընկերությունը սահմանում է պայմանագրում կատարման պարտավորությունները,
- Գործարքի գինը որոշում է Ընկերությունը,
- Գործարքի գինը բաշխվում է պայմանագրերում կատարման պարտավորություններին,
- Հասույթը ճանաչվում է միայն այն դեպքում, երբ Ընկերությունը կատարում է պայմանագրով ստանձնած պարտավորությունը:

Պաշարներ

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Պաշարների ինքնարժեքը որոշվում է առաջին մուտք՝ առաջին ելք հիմունքով (FIFO):

Իրացման զուտ արժեքն իրենից ներկայացնում է պաշարների գնահատված իրացման արժեքը՝ հանած բոլոր այն ծախսերը, որոնք անհրաժեշտ են այն ավարտելու և վաճառքն իրականացնելու համար:

Պահուստներ

Պահուստները ճանաչվում են, երբ Ընկերությունն ունի ներկա պարտականություն (իրավական կամ կառուցողական), որպես անցյալ դեպքերի արդյունք և հավանական է, որ Ընկերությունից կպահանջվի կատարել պարտականությունը և պարտականության գումարը հավաստիորեն կարող է գնահատվել:

Պահուստում ճանաչված գումարն իրենից ներկայացնում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ լավագույն գնահատականը, որը կպահանջվի ներկա պարտականությունը մարելու համար՝ հաշվի առնելով հարակից ռիսկերը և անորոշությունները: Երբ պահուստը գնահատվում է առկա պարտավորությունը մարելու համար հաշվարկված դրամական միջոցների հոսքերի միջոցով, դրա հաշվեկշռային արժեքը դրամական միջոցների հոսքերի (եթե ժամանակի մեջ դրամի արժեքի ազդեցությունն էական է) ներկայիս արժեքն է:

Եթե ակնկալվում է, որ երրորդ կողմն ամբողջությամբ կամ մասամբ փոխհատուցելու է պահուստը մարելու համար պահանջվող ծախսումները, ապա փոխհատուցումը պետք է դիտվի որպես առանձին ակտիվ, երբ ըստ էության որոշակի է, որ Ընկերության կողմից պարտավորությունը մարելու դեպքում փոխհատուցումը կստացվի և փոխհատուցման գումարը կարող է արժանահավատորեն չափվել:

Ֆինանսական գործիքներ

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են, երբ Ընկերությունը դառնում է գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական չափումը տեղի է ունենում իրական արժեքով: Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների խմբում չդասակարգված ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների դեպքում իրական արժեքին գումարվում են կամ իրական արժեքից նվազեցվում են գործարքի հետ կապված ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը սկզբնական ճանաչման ժամանակ, ըստ անհրաժեշտության: Գործարքի գծով ծախսերը, որոնք ուղղակիորեն վերագրելի են շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների ձեռքբերմանը, անմիջապես ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդ

Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդն իրենից ներկայացնում է որոշակի ժամանակահատվածում պարտքային գործիքի ամորտիզացված արժեքի հաշվարկի և տոկոսային եկամտի բաշխման մեթոդ: Արդյունավետ տոկոսադրույքն այն տոկոսադրույքն է, որը ճշգրտորեն զեղչում է ապագա գնահատված կանխիկի ստացումները (ներառյալ բոլոր տեսակի միջնորդավճարները և ստացված կամ վճարված գումարները, որոնք կազմում են արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասը, գործարքի հետ կապված ծախսերը և այլ պարգևավճարները կամ զեղչերը) պարտքային գործիքի ակնկալվող գործողության ժամանակահատվածի ողջ ընթացքում, կամ, ըստ անհրաժեշտության, ավելի կարճ ժամանակահատվածում՝ հասցնելով սկզբնական ճանաչման պահին առկա զուտ հաշվեկշռային արժեքին:

Ֆինանսական ակտիվներ

Բոլոր ֆինանսական ակտիվները ճանաչվում և ապաճանաչվում են գործարքի օրվա դրությամբ, երբ ֆինանսական ակտիվի ձեռքբերումը կամ վաճառքը համաձայնեցվում է պայմանագրով, և ըստ այդ պայմանագրի պայմանները անհրաժեշտ է ապահովել ֆինանսական ակտիվի մատակարարումը համապատասխան շուկայում սահմանված ժամանակահատվածում, և սկզբնապես գնահատվում են իրական արժեքով, գումարած գործարքի գծով ծախսերը:

ՖՀՄՍ 9 շրջանակներում բոլոր ճանաչված ֆինանսական ակտիվները պետք է հետագայում չափվեն ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով, հիմք ընդունելով Ընկերության ֆինանսական ակտիվների և ֆինանսական ակտիվների դրամային հոսքերի հատկանիշների կառավարման բիզնես մոդելը:

Մասնավորապես՝

- պարտքային գործիքներ, որոնք պահվում են բիզնես մոդելում, որի նպատակն է հավաքագրել պայմանագրով նախատեսված դրամական հոսքերը և որոնք ունեն պայմանագրով նախատեսված դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:
- պարտքային գործիքներ, որոնք պահվում են բիզնես մոդելում, որի նպատակն է ոչ միայն հավաքագրել պայմանագրով նախատեսված դրամական հոսքերը, այլև վաճառել պարտքային գործիքները և որոնք ունեն պայմանագրով նախատեսված դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ, հետագայում չափվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով;
- Բոլոր այլ պարտքային գործիքները (պարտքային գործիքներ իրական արժեքի հիմունքով կառավարվող կամ վաճառքի համար պահվող) և բաժնային գործիքներում ներդրումները հետագայում գնահատվում են շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով:
- Պարտքային գործիքներ ամորտիզացված արժեքով կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող. Ընկերությունը գնահատում է ֆինանսական ակտիվի դասակարգումը և չափումը՝ հիմք ընդունելով ակտիվի՝ պայմանագրով նախատեսված դրամական հոսքերի հատկանիշները և ակտիվի կառավարման մասով Ընկերության բիզնես մոդելը:

- Որպեսզի ակտիվը դասակարգվի և չափվի ամորտիզացված արժեքով կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով իրական արժեքով, պայմանագրային պայմանները պետք է առաջացնեն դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ.
- Պայմանագրով նախատեսված դրամական հոսքերը, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ, համապատասխանում են հիմնական վարկային համաձայնությանը: Պայմանագրային պայմանները, որոնք ներկայացնում են պայմանագրով նախատեսված այն դրամական հոսքերի ռիսկերի կամ անկայունության ենթարկվածությունը, որոնք չեն վերաբերվում հիմնական վարկային համաձայնությանը, ինչպիսիք են բաժնետոմսերի կամ ապրանքների գների ռիսկերի ենթարկվածությունը, չեն առաջացնում պայմանագրով նախատեսված դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ: Ստեղծված կամ ձեռք բերված ֆինանսական ակտիվը կարող է հանդիսանալ հիմնական վարկային համաձայնագիր, անկախ այն բանից, որ այն հանդիսանում է վարկ իր իրավական ձևով:
- Ֆինանսական ակտիվների կառավարման նպատակով բիզնես մոդելների գնահատումը իրականացվում է ՖՀՄՍ 9 նախնական կիրառման ամսաթվի դրությամբ ֆինանսական ակտիվի դասակարգումը որոշելու նպատակով: Բիզնես մոդելը կիրառվում է հետադարձ հիմունքներով բոլոր այն ֆինանսական ակտիվների նկատմամբ, որոնք առկա են եղել ՖՀՄՍ 9 սկզբնական կիրառման ամսաթվի դրությամբ: Ընկերությունը որոշում է բիզնես մոդելների մակարդակ, որն արտացոլում է ֆինանսական ակտիվների խմբերի համատեղ կառավարման ձևը հատուկ բիզնես նպատակների իրականացման համար: Ընկերության բիզնես մոդելը կախված չէ առանձին գործիքի մասով ղեկավարության մտադրություններից, հետևաբար, բիզնես մոդելի գնահատումն իրականացվում է՝ հիմք ընդունելով ավելի բարձր մակարդակի համախմբման, այլ ոչ անհատապես դիտարկման սկզբունքը:
- Ընկերությունն ունի մեկ բիզնես մոդել ֆինանսական գործիքների կառավարման մասով, որն արտացոլում է Ընկերության՝ իր ֆինանսական ակտիվների կառավարման մեթոդները դրամական հոսքեր ստեղծելու նպատակով: Ընկերության բիզնես մոդելները որոշում են, արդյոք դրամական միջոցները առաջանում են պայմանագրով նախատեսված դրամական միջոցների հավաքագրումից, ֆինանսական ակտիվների վաճառքից կամ այս երկու բաղադրիչների կիրառումից:
- Ընկերությունը հիմք է ընդունում նաև բիզնես մոդելի գնահատման ընթացքում հասանելի համապատասխան ողջ տեղեկատվությունը: Այնուամենայնիվ, այս գնահատումը չի իրականացվում հիմք ընդունելով այն սցենարները, որոնք Ընկերությունը չի կարող կանխատեսել, այսպես կոչված «վատագույն իրավիճակ» կամ «սթրեսային իրավիճակ» սցենարները:
- Ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչման ժամանակ Ընկերությունը որոշում է՝ արդյոք նոր ճանաչված ֆինանսական ակտիվները հանդիսանում են արդեն առկա բիզնես մոդելի մաս կամ արդյոք արտացոլում են նոր բիզնես մոդելի սկիզբը:

  <u>Արժեզրկում</u>.

  Ընկերությունը ճանաչում է ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստները հետևյալ ֆինանսական գործիքների մասով, որոնք շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չեն չափվում՝
  - Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ;
  - Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր.
- Ակնկալվող պարտքային կորուստները (ԱՊԿ) պետք է չափվեն կորուստների գծով պահուստի հաշվառման միջոցով՝ ստորև նշվածների համարժեք գումարի չափով՝
- 12-ամսյա ԱՊԿ. ակնկալվող կորուստներ վարկի գործողության ողջ ընթացքից ակնկալվող, որոնք արդյունք են ֆինանսական գործիքի դեֆոլտային իրադարձությունների, և որոնք կարող են տեղի ունենալ հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող 12 ամիսների ընթացքում (ինչպես նշված է փուլ 1-ում), կամ
- Ամբողջ ժամկետում ԱՊԿ. ակնկալվող կորուստներ վարկի գործողության ողջ ընթացքում, այսինքն՝ կորուստներ, որոնք արդյունք են ֆինանսական գործիքի գործողության ընթացքում հնարավոր դեֆոլտային իրադարձությունների (ինչպես նշված է փուլ 2-ում և 3-ում):

Ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի հաշվառում է պահանջվում, եթե այդ ֆինանսական գործիքի պարտքային ռիսկը զգալիորեն ավելացել է սկզբնական ճանաչումից հետո: Բոլոր այլ ֆինանսական գործիքների համար ԱՊԿ-ները չափվում են 12-ամսյա ԱՊԿ-ի չափով:

Ակնկալվող պարտքային կորուստները՝ ԱՊԿ-ները, պարտքային կորուստների ներկա արժեքի՝ հավանականության վրա հիմնված հաշվարկներն են: Դրանք չափվում են Ընկերության պայմանագրային հիմունքներով վճարման ենթակա դրամական հոսքերի և այն դրամական հոսքերի տարբերության ներկա արժեքի հիման վրա, որն Ընկերությունն ակնկալում է ստանալ տարբեր տնտեսական սցենարների համեմատության արդյունքում՝ գեղչված ակտիվի արդյունավետ տոկոսադրույքի չափով:

Ֆինանսական ակտիվների փոփոխությունը և ապաճանաչումը. Ֆինանսական ակտիվների փոփոխությունները տեղի են ունենում այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվի դրամական հոսքերը կառավարող պայմանագրային պայմանները վերանայվում են կամ այլ կերպ փոփոխվում են ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչման և ժամկետայնության միջև: Փոփոխությունը ազդեցություն է ունենում պայմանագրով նախատեսված դրամական հոսքերի գումարի և/կամ ժամկետների վրա անմիջապես կամ ապագայում:

Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստների ներկայացումը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում. Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստները ներառվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքից նվազեցում:

Ֆինանսական պարտավորություններ

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են կամ որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող կամ «այլ ֆինանսական պարտավորություններ»:

Այլ ֆինանսական պարտավորություններ. այլ ֆինանսական պարտավորությունները (այդ թվում՝ վարկերը և փոխառությունները) սկզբնապես չափվում են իրական արժեքով, առանց գործարքի ծախսերի: Այլ ֆինանսական պարտավորությունները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդն իրենից ներկայացնում է որոշակի ժամանակահատվածում ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքի և տոկոսային ծախսի տեղաբաշխման հաշվարկի մեթոդ:

Ֆինանսական պարտավորությունների ապաճանաչում. Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունները միայն այն ժամանակ, երբ Ընկերության պարտականությունները մարվում են, չեղյալ են համարվում կամ ուժը կորցնում են: Ապաճանաչված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և վճարված ու վճարվելիք հատուցման տարբերությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքում:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են բանկային հաշիվներ և բարձր իրացվելի ֆինանսական ակտիվներ, որոնց մարման ժամկետը երեք ամսից պակաս է, որոնք ենթակա են իրական արժեքի փոփոխման աննշան ռիսկի և օգտագործվում են Ընկերության կողմից կարճաժամկետ պարտավորությունների կառավարման ժամանակ: Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

Բաժնետիրական կապիտալ

Սովորական բաժնետոմսեր

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ: Սովորական բաժնետոմսերի և բաժնետոմսերի օպցիոնների թողարկումին անմիջականորեն վերագրվող հավելյալ ծախսերը ճանաչվում են որպես սեփական կապիտալից հանումներ՝առանց հարկային հետևանքների:

Արտոնյալ բաժնետիրական կապիտալ

Արտոնյալ բաժնետիրական կապիտալը դասակարգվում է որպես սեփական կապիտալ, եթե այն մարման ենթակա չէ կամ մարվում է միայն Ընկերության հայեցողությամբ, և ցանկացած շահաբաժնի

վճարում կատարվում է ըստ հայեցողության: Այդ շահաբաժինները ճանաչվում են որպես բաշխումներ սեփական կապիտալում Ընկերության բաժնետերերի կողմից հաստատվելուց հետո:

Արտոնյալ բաժնետիրական կապիտալը դասակարգվում է որպես պարտավորություն, եթե այն ենթակա է մարման որոշակի ամսաթվի կամ բաժնետերերի ընտրությամբ, կամ եթե շահաբաժինների վճարումները չեն կատարվում ըստ հայեցողության: Այդ շահաբաժինները ճանաչվում են շահույթում կամ վնասում որպես հաշվեգրված տոկոսային ծախս:

Շահաբաժիններ

Շահաբաժիններ հայտարարելու և վճարելու Ընկերության կարողությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության կանոններով և դրույթներով:

Սովորական բաժնետոմսերի շահաբաժինները ճանաչվում են որպես չբաշխված շահույթի բաշխում այն ժամանակաշրջանում, որում դրանք հայտարարվել են:

Ֆինանսական երաշխավորություն

Ֆինանսական երաշխավորության պայմանագրերով Ընկերությունից պահանջվում է կատարել որոշակի վճարումներ այն վնասների իրավատիրոջը փոխհատուցելու համար, որը նա կրում է այն պատճառով, որ նշված պարտապանը չի կատարում վճարումը ժամանակին՝ պարտքային գործիքի պայմաններին համապատասխան:

Շուկայականից ցածր տոկոսադրույքով թողարկված ֆինանսական երաշխավորությունները սկզբնապես չափվում են իրական արժեքով: Հետագայում դրանք չափվում են ՖՀՄՍ 9-ի համաձայն որոշված վնասի գծով պահուստի և սկզբնապես ճանաչված գումարի առավելագույնով՝ նվազեցված, անհրաժեշտության դեպքում, ՖՀՄՍ 15-ի սկզբունքներին համապատասխան ճանաչված եկամտի կուտակային գումարի չափով:

Նոր և վերանայված ՖՀՄՍ ստանդարտներ, որոնք գործում են ընթացիկ տարվա համար

Ընկերությունը կիրառում է ՖՀՄՍ-ում կատարվող բոլոր այն փոփոխությունները, որոնք ընդունվում են Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից:

Հաշվետու ժամանակահատվածում առկա չեն նոր ստանդարտներ, մեկնաբանություններ և փոփոխություններ, որոնք ուժի մեջ են մտել և որոնք կունենան կամ հնարավոր է ունենան ազդեցություն Ընկերության հետագա ֆինանսական հաշվետվությունների վրա:

4.Կարևոր հաշվապահական դատողություններ և գնահատումների հետ կապված անորոշության հիմնական աղբյուրները

Ընկերության հաշվապահական քաղաքականությունը կիրառելիս՝ Ընկերության ղեկավարությանն անհրաժեշտ է կատարել դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ այն ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վերաբերյալ, որոնք այլ աղբյուրներից ակնհայտ չեն երևում: Գնահատումները և դրա հետ կապված ենթադրությունները հիմնված են նախկին փորձի և այլ համապատասխան գործոնների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումներում փոփոխությունները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, երբ փոփոխությունը տեղի է ունենում, եթե փոփոխությունը վերաբերում է միայն այդ ժամանակաշրջանին, կամ փոփոխությունը ճանաչվում է այդ և ապագա ժամանակաշրջաններում, եթե փոփոխությունն ազդում է ընթացիկ և ապագա ժամանակաշրջանների վրա:

Ստորև ներկայացվում են այն կարևոր դատողությունները, բացառությամբ գնահատականներին վերաբերող դատողություններից (որոնք ստորև ներկայացված են առանձին), որոնք կատարվել են ղեկավարության կողմից Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման գործընթացում և որոնք առավել նշանակալի ազդեցություն ունեն ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա:

Անընդհատության սկզբունք

Ղեկավարությունը պատրաստել է այս ֆինանսական հաշվետվությունները անընդհատության սկզբունքի հիման վրա: Այս դատողությունը կատարելից ղեկավարությունը հաշվի է առել Ընկերության ֆինանսական վիճակը, ընթացիկ մտադրությունները, գործառնությունների շահութաբերությունները և ֆինանսական ռեսուրսների հասանելիությունը:

Ընկերությունը որոշակի գնահատումների հիման վրա ունի տեսանելի ապագայում անընդհատ գործելու ողջամիտ երաշխիք:

Առևտրային դեբիտորական պարտքերի վճարունակության ակնկալվող կորուստները

Ընկերությունը դեբիտորական պարտքերի գծով ճանաչում է պահուստ; Առևտրային դեբիտորական պարտքերը գնահատվում են՝ որպես նմանատիպ առևտրային պարտքերին բնորոշ ռիսկայնության: Ակնկալվող կորստի դրույքները որոշվում են՝ հաշվի առնելով Ընկերության նախորդ տարվա կորուստի վիճակագրությունը և հաճախորդների վրա ազդող ընթացիկ և ակնկալվող մակրոտնտեսական ցուցանիշները:

Եթե առևտրային դեբիտորական պարտքերի գծով փաստացի հավաքագրվող գումարները տարբերվեն գնահատումներից, ապա ֆինանսական հաշվետվությունները կարող են լինել էականորեն տարբեր:

Պաշարների իրացման զուտ արժեքը

Պաշարները սկզբնապես ճանաչվում են ինքնարժեքով, և հետագայում չափվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Ինքնարժեքը ներառում է ձեռքբերման բոլոր ծախսումները պաշարները ներկայիս վայր և առկա վիճակի բերելու հետ կապված:

Ղեկավարությունը գնահատում է, որ պաշարների իրացման զուտ արժեքը ցածր չէ 2024 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված դրանց հաշվեկշռային արժեքից:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետ

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետները հիմնված են ղեկավարության գնահատականների վրա և կարող են հետագայում փոփոխվել

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերության ղեկավարությունը վերանայում և անհրաժեշտության դեպքում փոփոխում է հիմնական միջոցների մնացորդային օգտակար ծառայության ժամկետների վերաբերյալ գնահատումները:

14.Հիմնական միջոցներ

	Շենքեր	Փոխանցող հարմարանքներ	Մեքենա-սարքավորումներ	Տրանսպորտային միջոցներ	Արտադրական գույք տնտեսական գույք գործիքներ	Այլ հիմնական միջոցներ	Հողամասեր	Ընդամենը
Սկզբնական արժեք								
2024թ հունվարի 1-ի դրությամբ	1 374 962	1 510	381 533	14 936	51 891	2 426	1 152 143	2 979 401
Ավելացումներ	1 442	-	16 408	-	2 881	-	-	20 731
Նվազեցումներ	-	-	(7 917)	-	-	-	-	(7 917)
2024թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	1 376 404	1 510	390 024	14 936	54 772	2 426	1 152 143	2 992 215
Ավելացումներ	2 630	-	38 054		3 880	-	-	48 514
Նվազեցումներ	-	-	(2 545)	(14 936)	-	-	-	(17 481)
2025թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	1 379 034	1 510	425 533	-	58 652	2 426	1 152 143	3 023 248
Կուտակված մաշվածություն և արժեզրկում								
2024թ հունվարի 1-ի դրությամբ	655 021	1 510	233 107	498	17 610	979	-	908 725
Տարվա ծախս	61 569	-	73 035	1 867	6 150	139	-	142 760
Նվազեցումներ	-	-	(44 855)	-	-	-	-	(44 855)
2025թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	716 590	1 510	261 287	2 365	23 760	1 118	-	1 006 630
Տարվա ծախս	49 616	-	74 595	250	6 305	347	-	131 113
Նվազեցումներ	-	-	(2 699)	(2 615)	-	-	-	(5 314)
2025թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	766 206	1 510	333 183	-	30 065	1 465	-	1 132 429
Զուտ հաշվեկշռային արժեք								
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	719 941	-	148 426	14 438	34 281	1 447	1 152 143	2 070 676
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	659 814	-	128 737	12 571	31 012	1 308	1 152 143	1 985 585
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	612 828	-	92 350	-	28 587	961	1 152 143	1 890 819

2025թ. դեկտեմբերի 31-ի և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող Երևան քաղաքի Արամի 54 և 54/2 հասցեում գտնվող շենքերը 3 805 500 հազար դրամ արժեքով գրավադրվել են „Ամերիաբանկ„ ՓԲԸ-ում ՝ ստացված վարկի դիմաց:

6.Պաշարներ

	2025թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դեղորայք և բժշկական պարագաներ	36 919	30 569
Այլ նյութեր	5 934	7 134
	42 853	**37 703**

2025թ. դեկտեմբերի 31-ի և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չունի գրավադրված պաշարներ:

7. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

	2025թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	**2024թ դեկտեմբերի 31-ի դրությամբ**
Պարտքեր մատուցած ծառայությունների գծով	74 884	38 854
Պարտքեր այլ եկամուտների գծով	763	1 413
Առևտրային դեբիտորական պարտքի արժեզրկման պահուստ	(1 329)	-
Ընդամենը ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	**74 318**	**40 267**
Տրված ընթացիկ կանխավճարներ	94	74
Կանխավճարներ հարկերի և պարտադիր վճարների գծով	145	120 694
Ընդամենը ընթացիկ առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	**74 557**	**161 035**

8, Տրամադրած փոխառությունները

	2025թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	**2024թ դեկտեմբերի 31-ի դրությամբ**
Կապակցված կողմերին տրամադրած փոխառություններ	686 871	854 542
	686 871	**854 542**

Փոխառությունը տրամադրվել է Ընկերության բաժնետեր Վաղինակ Մկրտչյանին: 01.07.2026թ դրությամբ փոխառությունը ամբողջությամբ մարվել է:

9. Դրամական միջոցներ

	2025թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	**2024թ դեկտեմբերի 31-ի դրությամբ**
Դրամական միջոցներ բանկային հաշիվներում	11 220	20 390
Կանխիկ դրամը դրամարկղում		
	11 220	**20 390**

Ընկերության կողմից „Ամերիաբանկ„ ՓԲԸ-ում բացված հաշիվներում առկա և հետագայում մուտքագրվող դրամական միջոցները գրավադրվել են „Ամերիաբանկ„ ՓԲԸ-ում ՝ ստացված վարկի դիմաց:

10. Սեփական կապիտալ
Կանոնադրական կապիտալ

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 36 188 հազար դրամ: Այն բաղկացած է 7 408 բաժնետոմսերից,որից 3 704 հատը պատկանում է ՈՒկրաինայի քաղաքացի Սամվել Տիգրանյանին, 3 704 հատը պատկանում է ՌԴ քաղաքացի Վաղինակ Մկրտչյանին :

Ընկերության կողմից նրան պատկանող 100 տոկոսի բաժնետոմսերը գրավադրվել են ,,Ամերիաբանկ,, ՓԲԸ-ում՝ ստացված վարկի դիմաց::

11. Վարկեր և փոփառություններ

	2025թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամերիա բանկ ՓԲԸ	1 510 854	1 630 781
	1 510 854	**1 630 781**
Այդ թվում		
Ոչ ընթացիկ	1 210 854	1 400 781
Ընթացիկ	300 000	230 000

12.Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

	2025թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	89 367	89 983
Աշխատակիցներին վճարման ենթակա գումարներ	47 192	36 772
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	**136 559**	**126 755**
Ստացված կանխավճարներ	540	-
Պարտքեր հարկերի և այլ պարտադիր վճարների գծով՝ բացի շահութահարկից	10 354	-
Պարտքեր շահութահարկի գծով	141 331	156 867
	22	-
	209 496	**283 622**

13.Պահուստներ

	2025թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ դեկտեմբերի 31-ի դրությամբ
Վաստակած արձակուրդային գծով պահուստ	25 898	23 950
	25 898	**23 950**

14.Հասույթ

	2025թ	2024թ
Բուժական ծառայությունների մատուցումից	1 285 575	1 211 104
Այլ	16 15	26 300
	1 302 490	**1 237 404**

15.Վաճառված ապրանքների ինքնարժեք

	2025թ	2024թ
Աշխատակիցներին հատուցումներ	834 129	800 801
Մաշվածություն և ամորտիզացիա	126 620	94 226
Դեղորայք և բժշկական պարագաներ	168 804	145 216
Այլ	108 123	55 674
	1 237 676	**1 095 917**

16.Վարչական ծախսեր

	2025թ	2024թ
Աշխատակիցներին հատուցումներ	123 545	85 816
Մաշվածություն և ամորտիզացիա	4 605	6 214
Գործուղման և ներկայացուցչական	373	240
Փոստի, հեռահաղորդակցության	8 870	11 506
Գրասենյակային, կոմունալ	31 629	30 999
Աուդիտորական և խորհրդատվական ծախսեր	2 841	4 030
Բանկային ծառայությունների և ապահովագրական ծախսեր	2 744	3 228
Չփոխհատուցվող հարկերից ծախսեր	6 374	10 134
Այլ	10 304	8 478
	191 285	**160 645**

17 .Այլ եկամուտներ

	2025թ	2024թ
Դրամաշնորհներից և այլ անհատույց ստացումներից	81 912	63 507
Այլ եկամուտներ	4 052	7 763
	85 964	**71 270**

18.Այլ ծախսեր

	2025թ.	2024թ.
Դեբիտորական պարտքի պահուստաֆոնդին հատկացում	1 329	-
Այլ ծախսեր	2 460	1 796
	3 789	**1 796**

19. Այլ օգուտ (կորուստ)

	2025թ		2024թ	
	Եկամուտ	Ծախս	Եկամուտ	Ծախս
Հիմնական միջոցների օտարումից	5 333	12 347	-	-
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից	62 247	31 076	-	-
	67 580	43 423	-	-

20.Շահութահարկ

Շահութահարկի գծով ծախսի հիմնական բաղադրիչներն են՝

	2025թ	2024թ
Ընթացիկ շահութահարկ՝		
Ընթացիկ շահութահարկի գծով ծախս	10 353	-
Հետաձգված հարկեր		
Ժամանակային տարբերությունների ծագում և հակադարձում	9 289	(9 279)
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ներկայացված շահութահարկի գծով ծախս / (օգուտ)	**19 642**	**(9 279)**

Հետաձգված հարկ

Ճանաչված հետաձգված հարկային ակտիվներ / (պարտավորություններ)

	Հետաձգված հարկային ակտիվներ		Հետաձգված հարկային պարտավորություններ		Զուտ հետաձգված հարկ	
	2025թ	**2024թ**	**2025թ**	**2024թ**	**2025թ**	**2024թ**
Հիմնական միջոցներ	(239073)	(252347)	-	-	(239073)	(252347)

Առևտրային դեբիտորական պարտք	239	-	-	-	239	-
Արձակուրդային գծով պահուստ	4 662	4 310	-	-	4 662	4 310
Չօգտագործված Հարկային վնաս	-	23 154	-	-	-	23 154
	(234 172)	**(224 883)**	**-**		**(234 172)**	**(224 883)**

2025 և 2024 թվականներին շահութահարկի կիրառվող դրույքաչափը կազմել է 18%:

Ժամանակավոր տարբերությունների շարժը տարվա ընթացքում

	2024թ հունվարի 1-ի դրությամբ	Եկամտում ճանաչված	2024թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	Եկամտում ճանաչված	2025թ դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հիմնական միջոցներ	(252347)	4 870	(252347)	13 274	(239 073)
Առևտրային դեբիտորական պարտք	-		-	239	239
Արձակուրդային գծով պահուստ	5 671	(1 361)	4 310	352	4 662
Չօգտագործված Հարկային վնաս	17 384	5 770	23 154	(23 154)	-
Զուտ հետաձգված հարկ	**(234 162)**	9 279	**(224 883)**	**(9 289)**	**(234 172)**

21.Իրական արժեք և Ռիսկերի կառավարում

Իրական արժեք

Մի շարք ակտիվներ և պարտավորություններ պահանջվում է չափել իրական արժեքով և/կամ բացահայտել դրանց իրական արժեքը ֆինանսական հաշվետվություններում:

Ընկերության ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների իրական արժեքի չափման համար հնարավորինս օգտագործվում է շուկայական դիտելի ելակետային տվյալներ: Իրական արժեքի չափման համար օգտագործվող ելակետային տվյալները դասակարգվում են ըստ տարբեր մակարդակների՝ կախված նրանից, թե որքանով են գնահատման մեթոդի մեջ օգտագործվող տվյալները դիտելի («իրական արժեքի հիերարխիա»):

Մակարդակ 1. Նույնական ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկաներում գնանշվող գներ (չճշգրտված)

Մակարդակ 2. Ուղղակի կամ անուղղակիորեն դիտելի ելակետային տվյալներ՝ բացառությամբ 1-ին մակարդակում ներառվող գնանշվող գներից

Մակարդակ 3. Ոչ դիտելի ելակետային տվյալներ (այսինքն՝ հիմնված չեն շուկայական տվյալների վրա)

Ակտիվների և պարտավորությունների դասակարգումը վերոնշյալ մակարդակներում հիմնվում է ամենացածր մակարդակի ելակետային տվյալների վրա, որոնք ունեն զգալի ազդեցություն իրական արժեքի չափման վրա: Տեղափոխությունը մի մակարդակից մյուսը ճանաչվում է այն ժամանակաշրջանում, որի ընթացքում տեղի է ունենում:

Ղեկավարությունը գտնում է, որ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գնահատված իրական արժեքները մոտավորապես համապատասխանում են դրանց հաշվեկշռային արժեքներին:

Ներքոնշյալ աղյուսակում ներկայացված է Մակարդակ 3-ում դասակարգվող իրական արժեքի չափման համար օգտագործված գնահատման մեթոդը, այդ թվում՝ հիմնական ոչ դիտելի ելակետային տվյալները, ինչպես նաև ոչ դիտելի ելակետային տվյալների և իրական արժեքի միջև փոխհարաբերությունը:

Հոդված	Իրական արժեք	Գնահատման մեթոդ	Իրական արժեքի հիերարխիայի մակարդակ	Նշանակալի ոչ դիտարկելի ելակետային տվյալներ
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	74 318	*Ընթացիկ* Կարճաժամկետ (12 ամսից պակաս) դեբիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը մոտ է իրական արժեքին	Մակարդակ 3	Կիրառելի չէ
Տրված փոխառություններ	686 871	*Ընթացիկ* Կարճաժամկետ (12 ամսից պակաս) տրված փոխառության հաշվեկշռային արժեքը մոտ է իրական արժեքին	Մակարդակ 3	Կիրառելի չէ
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	89 367	*Ընթացիկ* Կարճաժամկետ (12 ամսից պակաս) կրեդիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը մոտ է իրական արժեքին	Մակարդակ 3	Կիրառելի չէ
Վարկեր և փոխառություններ	1 210 854	*Ոչ ընթացիկ* Երկարաժամկետ (12ամսից ավելի) *Որոշվում է ապագա դրամական հոսքերի գեղչված արժեքով*	Մակարդակ 3	Կիրառելի չէ

Վարկեր և փոխառություններ	300 000	Ընթացիկ	Մակարդակ 3	Կիրառելի չէ

Կարճաժամկետ (12 ամսից պակաս) հաշվեկշռային արժեքը

մոտ է իրական արժեքին

Ռիսկերի կառավարում

Ֆինանսական գործիքներն օգտագործելիս Ընկերությունը ենթարկվում է հետևյալ ռիսկերին

- Պարտքային ռիսկ
- Իրացվելիության ռիսկ
- Շուկայական ռիսկ

Ընկերության ղեկավարությունը իրականացնում է վերահսկողություն այդ ռիսկերից յուրաքանչյուրի գծով, որն ամփոփված է ստորև:

Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ պատվիրատուն կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել իր պայմանագրային պարտավորությունները Ընկերության նկատմամբ, և այն առաջանում է հիմնականում պատվիրատուներից ստացման ենթակա դեբիտորական պարտքերից: Ընկերությունը չի պահանջում գրավ ֆինանսական ակտիվների գծով: Պարտավորությունների կատարման գծով ռիսկերի գնահատումներ իրականացվում են որոշակի սահմանները գերազանցող գումարներ պահանջող պայմանագրային կողմերի համար, բացառությամբ կապակցված կողմերի:

Ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը ներկայացնում է պարտքային ռիսկին ենթարկվածության առավելագույն չափը: Ստորև ներկայացված է հաշվետու ամսաթվի դրությամբ պարտքային ռիսկին ենթարկվածության առավելագույն չափը.

	2025թ	2024թ
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր՝ զուտ	74 318	40 267
Ֆինանսական ներդրումներ	686 871	854 542
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	11 220	20 390
	772 409	**915 199**

Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Պարտքային ռիսկին Ընկերության ենթարկվածությունը հիմնականում կախված է յուրաքանչյուր պատվիրատուի առանձնահատկություններից: Այնուամենայնիվ, ղեկավարությունը դիտարկում է նաև պատվիրատուների բազայի կառուցվածքը, ներառյալ պատվիրատուների արդյունաբերության ճյուղերի ու երկրների դեֆոլտի ռիսկը, քանի որ այս գործոնները կարող են ազդեցություն ունենալ պարտքային ռիսկի վրա, հատկապես ներկայիս տնտեսական պայմաններում:

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Ընկերությունը կունենա դժվարություններ՝ իր ֆինանսական պարտավորությունների հետ կապված պարտականությունները կատարելիս: Իրացվելիության ռիսկի կառավարման հարցում Ընկերության մոտեցումն է ապահովել բավարար իրացվելիություն բնականոն և արտակարգ իրավիճակներում պարտավորությունները կատարելու համար՝ առանց անընդունելի կորուստներ կրելու կամ Ընկերության համբավը վտանգելու:Որպես կանոն,Ընկերությունը ապահովում է ցպահանջ դրամական միջոցների այնպիսի չափի առկայություն,որը բավարար կլինի ակնկալվող գործառնական ծախսերը 60 օրվա ընթացքում ծածկելու համար՝ ներառյալ ֆինանսական պարտականությունների սպասարկման ծախսերը: Այս պարագայում հաշվի չի առնվում առանձնահատուկ

հանգամանքների հնարավորազդեցությունը,որոնք հնարավոր չի կանխատեսել,օրինակ՝ բնական աղետները:

Ստորև ներկայացված է տեղեկատվություն 2025թ և 2024թ դեկտեմբերի 31-դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլված գումարների վերլուծությունը՝ ըստ ակնկալվող մարման ժամկետների.

2025թ

	Ցպահանջ	մինչև 1 տարի	1-5 տարի	Ընդամենը
Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ				
Առևտրային և այլ դեբիտորական պարտք	-	74 318	-	74 318
Ֆինանսական ներդրումներ	-	686 871	-	686 871
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	11 220	-	-	11 220
Ընդամենը ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ	**11 220**	**761 189**	**-**	**772 409**
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ				-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր		89 367	-	89 367
Վարկեր և փոխառություններ		300 000	1 210 854	1 510 854
	-	389 367	1 210 854	1 600 221
Զուտ	11 220	371 822	(1 210 854)	(827 812)

2024թ

.

	Ցպահանջ	մինչև 1 տարի	1-5 տարի	Ընդամենը
Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ				
Ֆինանսական ներդրումներ	-	854 542	-	854 542
Առևտրային և այլ դեբիտորական պարտք՝զուտ	-	40 267	-	40 267
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	20 390	-	-	20 390
Ընդամենը ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ	**20 390**	**894 809**	**-**	**915 199**
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ				-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր		89 983	-	89 983
Վարկեր և փոխառություններ	-	230 000	1 400 781	1 630 781
	-	**319 983**	**1 400 781**	**1 720 764**
Զուտ արդյունք	**20 390**	**574 826**	**(1 400 781)**	**(805 565)**

Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի իրական արժեքի փոփոխության ռիսկն է շուկայական գների փոփոխության արդյունքում Շուկայական ռիսկը բաղկացած է երկու տեսակի ռիսկերից՝ տոկոսադրույքի և արտարժույթի փոխարժեքի ռիսկերից: Շուկայական ռիսկի ներգործությանը ենթարկված ֆինանսական գործիքները ներառում են վարկերը և փոխառությունները, դրամական միջոցները և դրանց համարժեքները, տրամադրած փոխառությունները, առևտրային դեբիտորական և կրեդիտորական պարտքերը

ա) տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը ֆինանսական գործիքի ապագա դրամական հոսքերի իրական արժեքի տատանումների ռիսկն է՝ շուկայական տոկոսադրույքի փոփոխության հետևանքով:

Ընկերությունը չունի պաշտոնական քաղաքականություն և ընթացակարգեր տոկոսադրույքների ռիսկերի կառավարման համար, քանի որ Ընկերությունը չունի յողացող տոկոսադրույքներով փոխառու միջոցներ: Ղեկավարությունը այդ ռիսկը համարում է աննշան Ընկերության բիզնեսի համար:

ա) արտարժութային ռիսկ

Ընկերությունը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Արտարժույթի ռիսկի նկատմամբ Ընկերության ենթարկվածությունը կապված է ֆունկցիոնալ արժույթից այլ արժույթով արտահայտված վաճառքների, ձեռքբերումների և փոխառությունների հետ:

Արտարժութային ռիսկի գծով ղեկավարությունը սահմանում է սահմանաչափեր ռիսկերի նկատմանք խոցելիության մակարդակի համար՝ ըստ արժույթի և ընդհանուր առմամբ:

Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, որոնք Ընկերությանը ենթարկում են արտարժութային ռիսկի, նկարագրված են ստորև:

2025թ.	ԱՄՆ դոլար՝ՀՀ դրամով վերահաշվարկված	ՌԴ ռուբլի՝ ՀՀ դրամով վերահաշվարկված
Ֆինանսական ներդրումներ	686 871	-
Վարկեր և փոխառություններ	(1 500 589)	-
Առևտրային կրեդիտորական պարտք	(686)	(5 248)
Զուտ արդյունք	**(861 472)**	**(5 248)**
2024թ.		
Ֆինանսական ներդրումներ	770 793	-
Դրամական միջոցներ	46	-
Վարկեր և փոխառություններ	(1 609 497)	-
Առևտրային կրեդիտորական պարտք	(714)	(3 997)
Զուտ արդյունք	**(839 372)**	**(3 997)**

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Ընկերության զգայունությունը՝ ԱՄՆ դոլարի և ՌԴ ռուբլու նկատմամբ դրամի 10% (2024թ.՝ 10%) աճին/նվազմանը: 10%-ը (2024թ.՝ 10%) ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է:

	2025թ	2024թ
ԱՄՆ դոլար(10% ամրապնդում)	(86 147)	(83 937)
ՌԴ ռուբլի(10% ամրապնդում)	(525)	(400)

22.Պայմանականություններ

Գործարար միջավայր

Ընկերությունը իր գործունեությունը իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, Ընկերության գործունեության վրա ազդեցություն է ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկաները:

Իրավական,հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ՝ ենթարկվելով մի քանի մեկնաբանությունների և հաճախակի փոփոխությունների,ինչը լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար:

2022թ փետրվարից Ռուսաստանի Դաշնության և ՈՒկրաինայի միջև ռազմական հակամարտության պատճառով մի շարք երկրներ պատժամիջոցներ սահմանեցին ՌԴ դեմ, որը ազդում է ոչ միայն երկու երկրների տնտեսական ակտիվության վրա,այլև համաշխարհային տնտեսության վրա: Պատժամիջոցների հետևանքով աշխարհի շատ երկրներում ապրանքների գները բարձրացել են, ռեսուրսների մատակարարման միջև հաստատված կապերը խաթարվել են, ինֆլյացիան նույնպես ազդում է գների վրա, և վերլուծաբանները նաև կանխատեսում են տնտեսական հետևանքներ համաշխարհային տնտեսության համար:

Հայաստանի Հանրապետության տնտեսական միջավայրի վրա էական ազդեցություն ունի նաև Ռուսաստանի Դաշնությունում գործարար ակտիվության մակարդակը, քանի որ Ռուսաստանի Դաշնությունից ոչ միայն դրամական միջոցների հոսքեր կան դեպի ՀՀ, այլև գրոսաշրջիկների ամենամեծ հոսքը: Ուստի տարածաշրջանում քաղաքական լարվածությունը.միջազգային պատժամիջոցները,արժեթղթերի շուկայի անկայունությունը, գնաճը և ՌԴ առջև ծառացած այլ ռիսկերը կարող են բացասաբար անդրադառնալ ՀՀ տնտեսության վրա:

Հայաստանի տնտեսությունը հաջողությամբ դիմակայել է համաշխարհային տնտեսական ցնցումներին և կարողացել է վերջին տարիներին գրանցել տպավորիչ մակրոտնտեսական ցուցանիշներ՝ հիմնականում մի շարք ընկերությունների գործունեությունը Հայաստան տեղափոխվելու և դրա հետևանքով դրամական փոխանցումների նշանակալի աճի շնորհիվ:

Այսպիսի գործարար միջավայրն էական ազդեցություն ունեն Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա: Ընկերությունը ձեռնարկում է անհրաժեշտ միջոցառումներ Ընկերության գործունեության կայունությունն ապահովելու նպատակով, այնուհանդերձ, ելնելով իրադարձությունների զարգացման անկանխատեսելիությունից, ղեկավարությունը հնարավորություն չունի արժանահավատ գնահատական տալ,թե նման հանգամանքները ինչ ազդեցություն կունենան Ընկերության հետագա տարիների ֆինանսական վիճակի վրա:

Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Ընկերությունը, բացառությամբ հյուրանոցային համալիրի և տրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվությանն պարտադիր ապահովագրությունից իր ակտիվների, գործունեության ընդհատման կամ երրորդ կողմերի պարտավորությունների հանդեպ, որոնք կարող են առաջանալ գույքի կամ գործառնությունների պատահարներից հասցված վնասից ապահովագրություն չունի:

Հարկային միջավայր

Հայաստանի Հանրապետության հարկային, արժութային և մաքսային օրենսդրությունը պարբերաբար տարբեր մեկնաբանությունների և փոփոխությունների առարկա է հանդիսանում: Ընկերությունը գտնում է, որ համապատասխան պետական կարգավորող մարմինների կողմից մեկնաբանությունները կարող են ազդել Ընկերության գործարքների և գործունեության վրա: Հարկային մարմինները կարող են ավելի խիստ դիրքորոշում ընդունել օրենսդրության մեկնաբանությունների և գնահատման գծով, որի արդյունքում հնարավոր է , որ այն գործարքների և գործնեության հարկային հաշվառման նկատմամբ վերաբերմունքը փոխվի, որոնց նախկինում հարկային մարմինները չէին անդրադարձել: Որպես այդպիսին լրացուցիչ հարկերը, տույժերը և տուգանքները կարող են հարկային մարմինների կողմից հաշվարկվել:

Ընկերությունը գտնում է, որ 2025թ դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը պատշաճ կերպով էր կատարում համապատասխան օրենքների պահանջները և Ընկերության հարկային, արժութային և մաքսային դրությունը կայուն է:

Դատական վարույթներ

Ընկերությունը ներգրավված չէ այնպիսի խոշոր դատական վարույթներում, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ իր ֆինանսական վիճակի վրա:

Ստացված երաշխավորություններ

Ընկերությունը ,,Ամերիաբանկ,, ՓԲԸ-ում ստացված վարկի դիմաց թվով 2 իրավաբանական անձանցից և թվով 3 ֆիզիկական անձանցից ստացել է 75 000 000 հազար դրամի բանկային երաշխավորություններ:

23.Գործարքներ կապակցված կողմերի միջև

Վերահսկողություն

Ընկերության վերահսկող է հանդիսանում նրա բաժնետերը / տես ծանոթագրություն 10 /

Ընկերության համար կապակցված կողմ են հանդիսանում նրա բաժնետերը և դեկավար անձնակազմը՝ ի դեմս գործադիր տնօրենի

Կապակցված կողմերի միջև գործարքները ներկայացված է ստորև

	2025թ	2024թ	Մնացորդը 31.12.2025թ	Մնացորդը 31.12.2024թ
Տրված փոխ Վաղինակ Մկրտչյանին	-	43	686 871	854 542
Տնօրենի աշխատավարձ	11 586	10 962	-	-

24. Ֆինանսական հաշվետվությունների վերադասակարգում և վերահաշվարկ

2025թ ֆինանսական հաշվետվությունները կազմելիս Ընկերությունը հայտնաբերել է սխալներ 2024թ դեկտեմբերի 31- դրությամբ ավարտված տարվա համար կազմած ֆինանսական հաշվետվություններում: Այդ պատճառով 2024թ ֆինանսական հաշվետվություններում կատարվել է հետևյալ վերադասակարգումները և վերահաշվարկները

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

	Նախկին	Կատարված վերահաշվարկ	Վերահաշվարկված
Ոչ ընթացիկ վարկեր և փոխառություններ	1 630 781	(230 000)	1 400 781
Ընթացիկ վարկեր և փոխառություններ	-	230 000	230 000

Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Մաշվածության գծով ծախսեր	1 049 424	(42 794)	1 006 630

25.Հետագա իրադարձություններ

Հաշվետու ամսաթվից հետո առ ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթիվը ճշգրտվող դեպքեր տեղի չեն ունեցել: